ՀԱԿՈԲ ԿՈՉՈՅԱՆ

(Ծննդյան 90-ամյակի առթիվ)

Ե. Մ. ԿՈՒՐԴՈՅԱՆ

Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ Հակոբ Կոչոյանը սովետահայ արվեստի դասականներից է։ Նրա ստեղծագործությունը ամուր կապերով կապված է մեր ժողովրդական արվեստի լավագույն ավանդույթների հետ։

Հակոբ Կարապետի Կոչոյանը ծնվել է Ախալցխա քաղաքում (Վրաստան) 1883 թ.։ Այստեղ է անցել նրա մանկությունը, գեղատեսիլ բնության մեջ և աշխատասեր արհեստավորների միջավայրում։

Ապագա վարպետը գեղարվեստական առաջին մկրտությունն ստացել է իր հոր՝ Կարապետ Կոչոյանի մոտ՝ ոսկերչա-փորագրական արվեստանոցում։

Տակավին 4—5 տարեկան էր Հակոբ Կոչոյանը, երբ հայրը ընտանիքով փոխադրվում է Վլադիկավկազ (այժմ՝ Օրջոնիկիձե), որտեղ կազմակերպած արվեստանոցում նորից միատեղ աշխատում են նրա եղբայրներն ու որդիները։ Հ. Կոչոյանի տասը տարին չլրացած վախճանվում է հայրը։ Արվեստանոցն անցնում է հորեղբայրներին, որտեղ Հ. Կոչոյանը կատարում է ինքնուրույն աշխատանքներ՝ հմտանալով փորագրական արվեստի մեջ. նա միաժամանակ ուսանում է տեղի արհեստավորաց դպրոցում։ Այս շրջանում նրա ստեղծագործությունը արտահայտվում է արծաթյա-ոսկյա տուփերի վրա փորագրված թռչնանկարներով, դիմանկարներով, զարդերով։

Վլադիկավկազի տասնամյակն ավարտելուց հետո ուսումնառության ձրգտումը 17-ամյա Կոչոյանին տանում է Մոսկվա՝ գեղարվեստական կրթություն ստանալու։ Այստեղ նա աշակերտում է ռուս նկարիչ Ռուսովին։ Կարճ ժամանակ անց մեկնում է Մյունխեն. սկզբում սովորում է նկարիչ Անտոն Աշբեյի մոտ, ապա ընդունվում է տեղի Գեղարվեստի ակադեմիան։ Վերջինիս դասընթացը հաջողությամբ ավարտելով և մասնագիտական գիտելիքների մեջ խորացած Կոչոյանը լուրջ ծրագրերով վերադառնում է Վլադիկավկազ։ Սակայն երիտասարդի երազանքների իրագործումը ժամանակավորապես խափանվում է սկսված առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով։ Նա զորակոչվում է բանակ և ուղարկվում ռազմաճակատ։ 1918 թ. զորացրվելով գալիս է Հայաստան։

Հ. Կոչոյանի ստեղծագործությունը ընդգրկեց և՛ գեղանկարչությունը, և՛ գրաֆիկան, և՛ կիրառական արվեստը։ Բոլոր դեպքերում էլ պահանջկոտությունը և բծախնդրությունը զարմանալիորեն բարձր են արտահայտվել նրա արվեստում և այդ ամենը մինչև կյանքի վերջը եղել են նրա ուղեկիցները։

Հակոբ Կոչոյանը մեծ սեր ու համակրանք էր տածում արհեստավորների հանդեպ և պատահական չէ, որ նրա վրձինն առաջին անգամ շարժվել է արհեստավորներին պատկերելու նպատակով՝ «Ոսկերիչ վարպետներ» (1902 թ.)։

Սա մի էտյուդ է, որը հետաքրքիր է նկարչի ռեալիստական մոտեցման տեսակետից և տիպաժների կոնկրետությամբ։

Մյունխենում ակադեմիական ուսումնառության տարիներին Հ. Կոջոյանը հիմնականում զբաղվել է առաջադրանքների կատարմամբ և չի ձգտել այլ գործեր կատարել ի հաշիվ ուսումնառության։ Ակադեմիան ավարտելուց հետո (1907 թ.) Հ. Կոջոյանը նկարում է մաժորային տրամադրություն արտահայտող իր «Ինքնադիմանկարը»։ Չորս տարի անց (1911 թ.), այս անգամ արդեն գրաֆիկական տեխնիկայի միջոցով (մատիտ) նկարիչն ստեղծում է իր մոր դիմանկարը՝ կատարված լակոնիկ գծերով, բարձր արտահայտչականությամբ։ Մոր դիմանկարին հաջորդում են՝ «Գյուղական սայլ», «Կարսի ընդհանուր տեսարան» և «Անիի ավերակները» գրաֆիկական թերթերը՝ կատարված գուաշով։ Այս վերջին աշխատանքը ռոմանտիկ բնույթի է և պետք է դիտել որպես Անիի ճակատագրի հետ կապված նկարչի ներքին աշխարհի տրամադրությունների արտահայտություն։



20-ական թթ. սկզբներին Հ. Կոջոյանի մեջ մեծ հետաքրքրություն է առաջանում դեպի Արևելքը՝ տեղի ժողովուրդների կյանքը ուսումնասիրելու նպատակով։ Սրան հետաքրքրում է հատկապես Իրանը, որի ժողովրդի կյանքի ու կենցաղի ուսումնասիրության ստեղծագործական արդասիքները եղան «Փողոց Թավրիզում», «Ճաշարան Թավրիզում» աշխատանքները և հետագայում՝ «Ուղտերի քարավանը» (1958 թ.), ուր արտահայտված են խոր մտքեր և մարդկային հույզեր, միաժամանակ տրված է իրանյան կյանքի սքանչելի կոլորիտը։ Այդ աշխատանքներում բարձր արտահայտչականությամբ պատկերված է բուն արևելյանը։ Կեցվածքները, շարժումները, նստելաձևերը, ժեստերը, նայվածքները, մարդկային անհատականության ինքնությունը, տրամադրությունները հնչում են միասնական ներդաշնակությամբ, չկա ոչինչ մտացածին։ Իրանական թեմաներով կատարված աշխատանքները դինամիկ են և անսովոր մանրով կատարված։

Հայաստանում Հ. Կոջոյանը հնարավորություն է ստանում ուսումնասիրելու հայկական մանրանկարչությունը, հին ձեռագրերը, վարպետ գրիչներին։

Հայկական լեռնաշխարհի ծայրահեղորեն այլազան պատկերները վերապատկերվում են նրա «Կոտայքի լեռները», «Թեջրաբակ» գյուղը, «Վաղ գարունը» կտավներում, որոնք էտյուդային լինելով հանդերձ, արտահայտում են հայրենի բնության շունչն ու հմայքը։ Հետաքրքիր կտավներ են բնության ճիշտ ընկալմամբ և ռեալիստական վերարտադրմամբ՝ «Քանաքեռը վաղ գարնանը», «Ուշ աշունը Երևանում», «Արարատը Ջրվեժ գյուղից», «Արարատյան հովիտ»։ «Քանաքեռը վաղ գարնանը» կտավում պատկերվել են ձյունով ծածկված

հնօրյա տներ, որոնք տեսանելի են ուրվագծերով, մարմնավորված գունային հարթությամբ լուծված կոմպոզիցիայով։ Փոքր-ինչ ռոմանտիկ տրամադրությամբ է հնչում «Ուշ աշունը Երևանում», իսկ «Արարատյան հովիտը», «Արարատը Ջրվեժ գյուղից»՝ ներշնչված են արծաթավուն կոլորիտային լուսավոր երանգներով։

Շատ ռոմանտիկական է «Մենավոր կաղնին»։ Նկարիչն այն վրձնել է ամենայն ջերմությամբ և հուզմունքով։

Որքան էլ կոմպոզիցիոն-թեմատիկ կտավների և գրաֆիկական թերթերի ստեղծումը առաջնային էր համարում Հակոբ Կոջոյանը, այնուամենայնիվ, նա երբեք բնապատկերներից չհրաժարվեց։ Մենք նկատի ունենք հատկապես «Գառնի. Ջրաղաց», «Գառնի գյուղում», «Գյուղական տնակ Գառնիում», «Գեղարդի ձորը», «Քյոր-Օղլու այրը Գեղարդում», «Գեղարդի վանքի շրջակայքը», «Գեղարդի վանքի բակը», «Ուխտավոր կանայք Գեղարդում», «Լուսավորչի աղոթատեղին Գեղարդում», «Գյուղ Ջերմուկի շրջակայքում», «Աշնանային մոտիվ—Ջերմուկ», «Լեռնային պեյզաժ—Ջերմուկ», «Ապարան», «Ապարան գյուղը», «Ապարան գյուղում» և այլ գործեր։

Նրբակերտության, արտահայտչականության, խոհերի և հույզերի դրսևորման շատ հետաքրքրաշարժ պատկեր է «Ախլցխացի կանայք» աշխատանքը։ Կերպարները և այգու բարիքները միաձուլված են և կազմել են մի ներդաշնակ ամբողջություն։ Նկարիչը այդ աշխատանքի կատարումը ձեռնարկել է ծննդավայրի հանդեպ խոր սիրով։

Քաղաքական բովանդակություն ունեցող առաջին աշխատանքը «Հայկական մունետիկ» գրաֆիկական պատկերն է՝ կատարված զարդանկարի ֆոնի վրա։ Նրանում հայոց աշխարհի արշալույսն է խորհրդանշվում, վերածնունդը, շեփորով ազդարարելով նրա ազատագրությունը։ Պատկերը տոնական է, հանդիսավոր և արտահայտիչ։ Հ. Կոջոյանը ջերմությամբ և անմիջականությամբ է կատարել այս գործը։

Հ. Կոջոյանի կոմպոզիցիոն թեմատիկ աշխատանքների մեջ ուրույն տեղ է գրավում «Կոմունիստների գնդակահարությունը Տաթևում» կտավը (1939 թ.)։ Խորհրդային արվեստի զարգացման համար դա մի ժամանակաշրջան էր, երբ պատմա-հեղափոխական թեման տակավին արժանի տեղ չէր գրավում։ Վարպետը առաջիններից մեկն էր, որ հոգեպես վերապրեց մեր ժողովրդի համար դառն այդ ժամանակը և նկարիչ քաղաքացու իր դիպուկ գեղարվեստական խոսքն ասաց։

Պատմա-հեղափոխական թեմայով նրա «Կարմիր բանակի մուտքը Կարճևան» գործը գրաֆիկական արվեստի լավագույն նմուշներից է, կատարված փայտագրությամբ։ Հայաստանում տեղի ունեցած հեղափոխական կռիվների պատմության այս դրվագում Կոջոյանին հետաքրքրել է ազատագրական բանակի մուտքի հանդեպ բնակչության ունեցած տրամադրությունը։ Հեծյալ բանակայինների ռիթմիկ ընթացքը, պատկերը պայմանավորող մաքուր գծայնությունը արտահայտչականության խոսուն երաշխիքներն են։

Փորագրությամբ է մարմնավորում ստացել նաև «Զորագյուղը», կատարված նույն ժամանակ և միևնույն տեխնիկայով։

Սովետական իշխանության տարիներին հայ ժողովրդի հերոսական էպոսի նկատմամբ գոյություն ունեցող հետաքրքրությունն ավելի խորացավ։ Հատկապես 30-ական թթ. սկսած «Սասունցի Դավիթը» դարձավ ներշնչանքի

անսպառ ակունք։ Եվ այդ բնագավառում առաջիններից մեկը Հակոբ Կոջոյանն էր։ Էպոսի և նրա հերոսների, հատկապես կոմպոզիցիոն-թեմատիկ գործերի ստեղծման լավագույն բանալին տվեց Հ. Կոջոյանը։ Այսօր էլ, Էպոսի թեմաներով զբաղվող մեր նկարիչներն ու քանդակագործները ընդունում են նրա գերազանցությունն այդ բնագավառում։



Ե. Չարենց —«Գիրք ճանապարհի» անվանաթերթ 1933 թ.
Е. Чаренц. «Книга пути» титульный лист 1933 г.

Լինելով մեր երկրի գրաֆիկական արվեստի մեծ ներկայացուցիչներից մեկը, Հ. Կոջոյանը նոր աստիճանի բարձրացրեց արվեստի այդ տեսակը։ Թ՛վ հաստոցային, և՛ գրքային գրաֆիկայում Հ. Կոջոյանի վաստակի սքանչելի արդյունքներով սկզբնավորվեց գրաֆիկական մի նոր դպրոց մեզանում։

«Սասունցի Դավիթ» գրաֆիկական աշխատանքը, որ ստեղծեց նա 1922 թ., էպոսի համահավաք դրվագների մի ամբողջություն է։ Այն արտահայտում է հիմնականում կոմպոզիցիայով անջատ, սակայն բովանդակությամբ ներդաշնակված պատկերներ։ Կենտրոնական մոտիվը Դավիթն է՝ Քուռկիկ Ջալալիի

մեջքին նստած, Թուր Կեծակին ձեռքին Մսրա Մելիքի վրա սրընթաց արշավելիս։ Միևնույն թերթին, հիմնական մոտիվի շուրջը, համապատասխան դասավորմամբ տեղադրված են՝ Դավթի ծնունդը, Դավիթը՝ որսորդ, Դավիթը՝ հարկահաններին վռնդելիս, Մսրա Մելիքին քնից արթնացնելը, Մսրա Մելիքի մոր աղաչանքը և այլ դրվագներ (թվով 10-ից ավելի)։ Իր այս մնայուն աշխատանքում Հ. Կոջոյանը հասել է գաղափարա-գեղարվեստական բարձր մակարդակի։

Հ. Կոջոյանը աստիճանաբար ավելի ու ավելի է մերձենում նոր կյանքին, ընկալում այն։ Նրա ներկապնակի բազմերանգությունը կոնկրետանում է, և թեմատիկան դառնում բազմազան։

Բնության էության մեջ թափանցելու, նուրբ կոլորիտի, երաժշտական հընչեղության և բանաստեղծական-քնարական ոգու դրսևորման կոջոյանական արգասիքներ են՝ «Աշունը Երևանում», «Լեռնային բնանկար», «Մայմեխի բարձունքից», «Կոտայքի լեռները» և այլ գործեր, ուր նկարիչը բնության իր պաշտամունքը դրսևորել է ռեալիստական կենդանի ու գունեղ երանգներով։

20-ական թթ. սկսած պատմական թեմատիկան մտնում է Հակոբ Կոջոյանի ստեղծագործական տեսադաշտը և ամուր տեղ գրավում այնտեղ։ Դա նկարչի՝ իր ժողովրդի պատմության օրհասական տարիների հանդեպ հայրենասիրական զգացմունքների դրսևորումն էր։ Նրա այդ տրամադրությունների լավագույն մարմնավորումներից մեկը «Դվինի ազատագրումը» կտավն է։ Տեղի ունեցող դեպքերն այնպես են մարմնավորվել և պատերազմական թոհուբոհն այնպիսի ռեալիստական շունչով են դրվել, որ թվում է, թե վարպետը դեպքին ականատես է եղել։

Համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ իրենց ստեղծագործական ուժերը մոբիլիզացրին նաև արվեստի գործիչները։ Կազմակերպվեցին կերպարվեստագետների շատ կոլեկտիվ ցուցահանդեսներ։ Հ. Կոջոյանը այս շրջանում ցուցադրում է իր «Գերված ֆաշիստական գեներալը», «Գնդապետ Զաքյանը ռազմաճակատում» և այլ գործեր։

Ավելի ուշ, իր կյանքի յոթերորդ տասնամյակին, վարպետն ստեղծում է բազմաթիվ բնապատկերներ՝ «Օձունի արտերը», «Բյուրական», «Դեբետի ձորը Թումանյան գյուղի մոտ», «Զաթնդաղի լեռները Թումանյան գյուղից», «Աշոտ Երկաթի բերդը Թումանյան գյուղից» աշխատանքները։

Ինչպես ասացինք, Հ. Կոջոյանը ոչ միայն մեծ վարպետ էր գրաֆիկայի մեջ, այլև ստեղծեց գրաֆիկական դպրոց։ Մեր իրականությունից դուրս վարպետը ճանաչման արժանացավ 1934 թ. Մոսկվայում կազմակերպված խորհրդային դրականության նվաճումներին նվիրված ցուցահանդեսի ժամանակ, որին Հ. Կոջոյանը մասնակցում էր նաև Մաքսիմ Գորկու երկերի պատկերազարդումներով։ Եվ պատահական չէ, որ վարպետի այդ ստեղծագործությունները չեն վրիպում Մ. Գորկու ուշադրությունից։ Այդ առիթով «Պրավդան» գրում է. «Գրողների երկերի և պատկերազարդումների խմբում Ալեքսեյ Մաքսիմովիչը նշեց հայ նկարիչ Կոջոյանի աշխատանքների ցուցադրումը։ Այդ աշխատանքներն այնքան դիպուկ էին, որ դիտելիս այցելուի մտքում անմիջապես վերականգնվում են Մաքսիմ Գորկու տողերը՝

Փոթորիկն հիմա թինդով կպայթի...
Դա խիզախ, հպարտ մրրկահավն է
Ճախրում սլացող կայծակների մեջ,

Ահեղ, աղմկող հորդ ծովի վրա.
Դա— հաղթանակի երգիչն էր ճչում.
— Թող փոթորիկը ուժգնորեն պայթի...»

Այդ նույն պատկերահանդեսի առիթով «Վեչերնյայա Մոսկվա» թերթը 1934 թ. հուլիսի 24-ին գրում է, որ «Անդրկովկասի լավագույն գրաֆիկ Հակոբ Կոջոյանի անունն իրավամբ պետք է ծանոթ լինի ամբողջ Սովետական Միությանը»։

Պահանջկոտ, հրատարակչական գործի մեջ հմտացած, գեղագիտական բարձր ճաշակով օժտված և բազմակողմանի զարգացած բանաստեղծ Ե. Չարենցի և Հ. Կոջոյանի ծանոթությունը վաղուց էր սկսվել, բայց «Գիրք ճանապարհին» պայմանավորեց նրանց խոր մտերմությունը։

«Գիրք ճանապարհի» նկարչական ձևավորումը առ այսօր մնացել է անկրկնելի։ Նրանում գրաֆիկական արվեստը հնչում է բովանդակության խորությամբ, գծանկարի ամրությամբ, պատկերների իմաստալի հաջորդականությամբ, գծերի ռիթմիկ կառուցվածքով և կոմպոզիցիոն սխեմաների բազմազանությամբ։

Հ. Կոջոյանի գրաֆիկական գործերի մեջ ոչ մեկը այնքան ինքնատիպ չէ, որքան «Գիրք ճանապարհի» պատկերազարդումները։ Վարպետի ստեղծագործական պոռթկումի այս արգասիքը թվում է, թե մի շնչով է կատարված, խստությամբ արտահայտված, արվեստով շնչավորված, գաղափարական հագեցվածությամբ բանաստեղծի հոգուն և սրտին ներդաշնակված։

Նրբությամբ, բարձր ճաշակով և երկի խոր ըմբռնմամբ են կատարվել Ստ. Զորյանի «Հազարան բլբուլի» ձևավորումներն ու պատկերազարդումները։ Մտքի թռիչքն ու հզոր երևակայությունն այստեղ միաձուլված մարմնավորվել են արտահայտչական վեհությամբ և խորությամբ։ Այս աշխատանքին հաջորդում են բազմաթիվ այլ երկերի ձևավորումներն ու պատկերազարդումները։ Թե Հակոբ Կոջոյանը որպիսի խորությամբ և ճիշտ ընկալմամբ է մտնում ձևավորվող երկերի խորքերը, կարող են օրինակ հանդիսանալ Ա. Բակունցի «Սև ցելերի սերմնացանը», Ջ. Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունը», Այգեկցու «Աղվեսագիրքը», «Հայաստանի պոեզիայի անթոլոգիան», Դ. Վարուժանի «Հարճը» և ուրիշ երկեր, ինչպես նաև «Սայաթ-Նովայի խաղերի ժողովածուն»։

Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհին» և Սայաթ-Նովայի «Խաղերը» բացարձակապես տարբեր բնույթի երկեր են և ձեռնարկելով դրանց ձևավորմանն ու պատկերազարդմանը, Հ. Կոջոյանը երկու դեպքում էլ հասել է մեծ հաջողության, ստեղծագործական միանգամայն տարբեր ճանապարհներ և տեխնիկական տարբեր միջոցներ ընտրելով։

Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ձևավորումն ու պատկերազարդումը իր տեսակի մեջ երևույթ է և երեք ժողովուրդների ազգային հատկանիշների խոր ճանաչման արտահայտություն։ Այդ ժողովուրդների մշակույթների, կենցաղի և ճաշակի ճշմարիտ ընկալումը Հ. Կոջոյանի աշխատանքների մեջ մարմնավորվել է անթերի։

Ինչպես «Գիրք ճանապարհին» նկարազարդելու ժամանակ, այնպես էլ այստեղ, ստեղծագործական մտորումները Հ. Կոջոյանին հանդեցրել են մի նոր, թարմ եղանակի դործադրման։ Երեք ժողովուրդների խաղերից յուրաքանչյուրին նա տվել է համապատասխան և բնորոշ ձևավորում։

Հայերեն խաղերին նախորդող առաջին նկարում զույգ խորանների մեջ պատկերված են կժերն ուսած հեզաճկուն կանայք՝ աղբյուրից վերադառնալիս. նրանց կարծես ուղեկցում է կանաչ ճյուղը բերանն առած եղնիկը։ Երկրորդ պատկերի կենտրոնում Սայաթ-Նովան է քյամանչա նվագելիս։ Երկուսի ֆոնը նույնն է՝ բաց-վարդագույն, կոլորիտային։

Վրացերեն խաղերի երկթերթ պատկերները կոմպոզիցիայով այլ են։ Առաջին թերթում ծաղիկների մեջ նազանքով պարում է մի կին։ Երկրորդ թերթի կենտրոնում նույնպես պարող կին է, կոմպոզիցիայով նախորդից բոլորովին տարբեր. նրա մի կողմում նստած դիրքով, դափհար կին է, մյուս կողմում՝ զարդանախշեր։ Այստեղ նույնպես իշխում է ընդհանուր բաց կոլորիտը։

Փոքր-ինչ տաք կոլորիտով է կատարված ադրբեջաներեն խաղերի երկթերթ պատկերի առաջին մասը՝ կազմված եռանկյունաձև կոմպոզիցիայով. երաղային տրամադրություն արտահայտող երեք կանայք՝ նույնպես ծաղիկների մեջ՝ մեկի ձեռքին ծաղկեփունջ, Սայաթ-Նովայի պատկերը՝ սազը ձեռքին, և հետո շատրվան հիշեցնող պատկեր և վերջում՝ բլբուլի կերպար։

Բոլոր խաղերի պատկերազարդման ընդհանուր տրամադրությունը մաժորային է և կենդանի արտահայտչականությամբ առլեցուն։

Խաղերից հետո Հ. Կոջոյանը մի էջի վրա սեպագիր տառերով հյուսել է Հովհ. Թումանյանի յոթնյակը.

Խաղով եկավ,
Ախով գնաց Սայաթ-Նովան.
Երգով եկավ,
Վերքով գնաց Սայաթ-Նովան.
Սիրով եկավ,
Սրով գնաց Սայաթ-Նովան,
Սիրով մնաց Սայաթ-Նովան։

Տեքստից վերև, աղեղնաձև հյուսվածքի կենտրոնում, քյամանչան և դավթարի վրա։ Այս ամենը զարդանախշ շրջանակի մեջ մուգ արծաթագույն ֆոնի վրա ստացել է մի ամբողջական ներդաշնակ պատկեր, որի կոմպոզիցիոն բանալին դավթարն է ու քյամանչան։

Գրքային պատկերազարդման նշանավոր աշխատանքներից է Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգությունը։

Հայկական ժողովրդական հեքիաթների ձևավորումն ու պատկերազարդումը Հ. Կոջոյանի ստեղծագործական կյանքի իմաստնության նոր վկայությունն է, նրա երևակայական աշխարհի հարստության նոր արտահայտությունը։ Նրա նկարազարդած հեքիաթներից առանձնապես հիշատակման արժանի են «Իմաստուն էծի հեքիաթը», «Արքայազնը սպանում է դևին», «Ձկնորսի տղան» և այլն։ Ավելի ուշ վարպետը մեծ հաջողությամբ պատկերազարդում է Հովհ. Թումանյանի «Փարվանան»։

Հակոբ Կոջոյանը տիրապետում էր գրաֆիկական արվեստի բոլոր գաղտնիքներին, նրա տեխնիկական բոլոր միջոցներին (փորագրություն, լիտոգրաֆիա, օֆորտի բազմազան ձևեր), այլև տեխնիկայի ամենադժվարին տեսակներին։

Տասնյակների են հասնում կիրառական արվեստի համար Կոջոյանի կատարած էսքիզները (արծաթյա մատուցարան, արծաթյա գավաթ և սկահակ,

արծաթյա սափոր, արծաթյա ափսե, փյունիկ-ճենապակյա ափսե, «Սայաթ-Նովա» պնակ)։ Այս ամենը, ինչպես և տարբեր նպատակների համար արված պիտակները կատարված են կոջոյանական բծախնդրությամբ և ճաշակով։

Հ. Կոջոյանը երախտիքի բարի հիշատակ է թողել շատ երիտասարդ ստեղծագործողների կյանքում նաև որպես գեղարվեստական ինստիտուտի պրոֆեսոր։

Կյանքի վերջին տարիներին, երբ վարպետի առողջությունը արդեն տեղի էր տալիս, Հ. Կոջոյանը հազվադեպ էր հեռանում կտավակալից։ Նա աշխատում էր ինքնամոռացությամբ, աշխատում էր երիտասարդական եռանդով, համառությամբ։ Ի թիվս այլ աշխատանքների, այդ տարիներին վարպետը ստեղծեց կենցաղային ժանրի մի շարք փայլուն կտավներ («Աղբյուրի մոտ», «Քրդուհիները փալաս գործելիս», «Հաց թխող կանայք», «Դյառնի գյուղում», «Ապարան» և այլն)։

Հակոբ Կոջոյանի ստեղծագործությունների՝ Երևանում կազմակերպված անհատական ցուցահանդեսը փոխադրվեց Մոսկվա։ Մայրաքաղաքի արվեստասեր հասարակայնության համար դա մեծ և շատ հաճելի հայտնություն էր։ Տպավորությունների գրքում այցելուներից շատերի թողած հիացական գրառումները դրա պերճախոս ապացույցներն են։

Այդ նույն տասնամյակի վերջում Կոջոյանը նորից խանդավառված «Սասնա ծռերի» թեմայով, աշխատում էր «Սասունցի Դավիթ» կերպարի վրա, որը պատկերվեց նրա կողմից շողարձակ Թուր Կեծակին ձեռքին, Քուռկիկ Ջալալիի մեջքին հեծած, սրարշավ Մսրա Մելիքի վրա հարձակվելիս։

Եվ «Սասունցի Դավիթը» դարձավ Կոջոյանի ստեղծագործական կյանքի կարապի երգը։ Նա կնքեց իր մահկանացուն 1959 թ. ապրիլի 24-ին։

Երևանի Պուշկինի անվան փողոցի № 70 տան ճակատին փակցված հուշատախտակին գրված է. «1934—1959 թվականներին այստեղ ապրել և ստեղծագործել է Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ Հակոբ Կոջոյանը»։ Ավելացնենք, որ այսօր էլ այնտեղ ապրում է մեր մշակույթի հավերժացած վարպետը, քանի որ ստեղծագործողը հետմահու շարունակում է ապրել իր կերտած գործերի մեջ, որոնց մի զգալի մասը նրա տուն-թանգարանի բովանդակությունն են կազմում։

Կերպարվեստի բազմազան բնագավառներում Հակոբ Կոջոյանի թողած հարուստ ժառանգության անզուգական նմուշները իրենց արժանի տեղը կգրավեն հայ կերպարվեստի դարավոր գանձարանում։

АКОП КОДЖОЯН

(К 90-летию со дня рождения)

Е. М. КУРДОЯН

(Резюме)

Народный художник Армении Коджоян Акоп Карапетович является одним из ярких представителей советского искусства, основателем армянской графической школы. Коджоян сделал десятки эскизов для мастеров прикладного искусства, создал много композиционно-тематических полотен, в том числе и исторического характера.